ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԶԱՐԹՈՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*РЕСПУБЛИКА АРМЕНИЯ*
*АРМАВИРИ МАРЗ*
*ЗАРТОНКИ* **АМАЙНКАПЕТАРАН**

*ՀՀ. Արմավիրի մարզ Զարթոնք համայնք 1 փողոց 28 շենք*
*Էլ.Փոստ՝ zartonq.armavir@mta.gov.am.*
*Zartonk1@mail.ru Հեռ. 091-33-00-64*

Թիվ 94
<< 03 >> Հոկիսի 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

***Հարգարժան պարոն մարզպետ***

Ի կատարումն Ձեր 13 հունվարի 2010թ. թիվ 25 գրությանը, Արմավիրի մարզի Զարթոնքի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում 2019 թվականի հունիսի ամսին կայացրած թիվ 23-Ա, 24-Ա որոշումները և թիվ 05-Ա, 06-Ա արձակած կարգադրությունները:

Առդիր 5 թերթ:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Է.Եղիազարյան

Մ-12165-2019
04 07 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 04 >> Հունիսի 2019թ. Թիվ 23-Ա

ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 1 ՓՈՂՈՑԻ 25 ՏԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԹՈՒՐ ՓԱՅԼԱԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Զարթոնք համայնքի բնակիչ Արթուր Փայլակի Համբարձումյանը դիմել է, Արմավիրի մարզի Զարթոնք համայնքի 1 փողոցի 25 տան հասցեում գտնվող ժառանգության իրավունքով ձեռք բերված բնակավայրի տնամերձ 1232 քմ հողամասի և հողամասում առկա շենք-շինությունների նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Զարթոնք համայնքի 1 փողոցի 25 տուն հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Արթուր Փայլակի Համբարձումյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 37,95 քմ բնակելի տան՝ կառուցված 1955թվ-ին, 9.45 քմ բնակելի տան՝ կառուցված 1955թվ-ին, ծածկ՝ 13.95 քմ կառուցված 1965թվ-ին, 25,65 քմ մառան՝ կառուցված 1965թվ-ին, անասնաշենք՝ կառուցված 1977թվ-ին, 16,65 քմ, ջրավազան՝ կառուցված 1965 թվ-ին 1.95 քմ. գույքային միավորների նկատմամբ Արթուր Փայլակի Համբարձումյանին ծնվ. 15.12.1958թ. ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1232քմ հողամասի վրա գրանցված շենք-շինությունների նկատմամբ:
4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Արթուր Փայլակի Համբարձումյանի ծնվ.15.12.1958թվ. սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զարթոնքի համայնքապետի պաշտոնակատար՝ Է.Եղիազարյան

2019թ. ,,04,, Հունիսի
գ. Զարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

<< 10 >> Հունիսի 2019թ. Թիվ 24-Ա

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 06.07.2019թ. արտահերթ նիստի թիվ 12-Ա որոշումը և հաշվի առնելով Ջարթոնք համայնքի բնակչուհի Սանդուխտ Հարոյանի գրավոր դիմումը և Համլետ Փայլակի Սարգսյանի սոցիալական վիճակը.

Որոշում եմ՝

1. 26.05.2019 թվ-ին Ջարթոնք համայնքում քամուց տուժած համայնքի թվով մեկ և մեկ սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերել ֆինանսական օգնություն հաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքապետի պաշտոնակատար՝ Է.Եղիազարյան

2019թ. Հունիսի ,,10,,
գ.Ջարթոնք

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 07-Ի
ԹԻՎ 24-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՔԱՄՈՒՑ ՏՈՒԺԱԾ ԵՎ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

| Հ/Հ | Ազգանուն, անուն հայրանուն | Գումարի չափը հազ.դրամ |
|---|---|---|
| 1 | Հարոյան Սանդուխտ Ռաֆիկի | 100,0, |
| 2 | Սարգսյան Համլետ Փայլակի | 100,0, |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՁԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 10 >> Հունիսի 2019թ. Թիվ 05-Ա

ԼԻԱՆՆԱ ՍԵՐՈԲԻ ԽՆՈՒՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 164-րդ հոդվածի 1-ին մասով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2019 թվականի Հունիսի 10-ից համայնքապետարանի գրադարանի վարիչ Լիաննա Սերոբի Խնուսյանին տրամադրել 2019 թվականի հերթական արձակուրդը 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աշխատանքի մեջ համարել ,, 24 ,, Հուլիսի 2019 թվական:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ձարթոնք համայնքի համայնքապետի Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ (Մարինե Պետրոսյան)՝ սահմանված կարգով կատարել վճարում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Է.Եղիազարյան

2019թվ.Հունիսի ,,10 ,,
գ.Ձարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 13 >> Հունիսի 2019 Թիվ 06

ՍՈՒՐԵՆ ՎԱԼԵՐԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ, 94-րդ հոդվածների 1-ին կետով և հիմք ընդունելով Սուրեն Վալերիկի Պողոսյանի դիմումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2019 թվականի հունիսի 13-ից Սուրեն Վալերիկի Պողոսյանի հետ 4 /չորս/ ամիս ժամանակով կնքել աշխատանքային պայմանագիր նշանակելով նրան վարորդի պաշտոնին:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնք համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետին՝(Մարինե Պետրոսյանին)՝ սահմանված կարգով վճարել աշխատավարձ՝ համաձայն հաստիքացուցակի 127000 հազար դրամ:
3.. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Է.Եղիազարյան

,,13.. Հունիսի 2019թ.
գ. Զարթոնք